




ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

(1973 թ. մայիսի 4, Ուստր)

Հայրական սիրով կողջունենք ձեր այս տարեկան ժողովը և Մեր օրհնությունը կրեքենք բոլորիդ:

Ամերիկահայոց թեմի հերթական այս ժողովը, բացառիկ նշանակություն կատանա, որովհետև կգուգադիպի այս երկրին մեջ հայ եկեղեցվո թեմական կազմակերպության սկզբնավորման 75-ամյակին:

Երեք քառորդ դար անցավ այն օրեն երբ Մեր երանելի նախորդներն՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Հայրիկը, ստորագրեց 2 հուլիս 1898 թվակիր կոնդակը, որուն հիման վրա ստեղծվեցավ ու կազմակերպվեցավ Ամերիկայի Միացյալ Նահանգաց հայոց թեմը, վերին իշխանությանը ներքո Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի:

Ամերիկահայ եկեղեցիին ու հավատացյալ Մեր զավակներուն համար, այս պատմական հանգրվանին, անհրաժեշտ կգտնենք պահ մը կանգ առնել, ականարկ մը նետելու դեպի ետ, դեպի անցյալ ժամանակները, ու ապա Մեր ուշադրությունը կեդրոնացնել՝ ձեր թեմական ու համայնքային կյանքի ապագային հետ առնչվող քանի մը կենսական հարցերու վրա:

Մայր հայրենիքեն դեպի նոր աշխարհ հայոց գաղթը սկսավ պատմական ժամանակաշրջանի մը, երբ անոնց կյանքը հետզհետե անշնչելի կդառնար մայր հողին վրա, Օսմանյան Կայսրության դաժան տիրապետության ներքո: Իբրև հետևանք այդ իրադրության, սկիզբ առավ հայ ազատագրական շարժումը, շարժում, որ արագությամբ փոթորկեց ամբողջ հայության գիտակցությունը:

Անցյալ դարուն, Հայաստանի արևելյան և արևմտյան շրջաններուն մեջ զարգացող հայ ազատագրական, հեղափոխական շարժումը՝ բնական, արդար և անհրաժեշտ երևույթ էր: Թե այդ տարիներուն կատարվեցան ճակատագրական սխալներ, իբրև հետևանք քաղաքական միամիտ դատումներու և շատ զգացական գործելակերպերու, չեն կրնար փոխել այսօր մեր ընդհանուր

գնահատականը հայ ազատագրական շարժման նկատմամբ, և չեն կրնար ստվեր նետել՝ ազատության արյունոտ ճանապարհին զոհված մեր ժողովուրդի հերոս զավակներու հիշատակին վրա, հիշատակ, որ միշտ սուրբ պետք է պահվի, հիշատակ, որուն համար բոլոր ժամանակներու հայերը կրնան հպարտ ըլլալ:

Պարտք համարեցինք այս խորհրդածությունը կատարելու այսօր, մանավանդ որ անցյալ դարու և այս դարու սկիզբներուն, ամերիկյան հյուրընկալ հողին վրա ոտք դրած պանդուխտ մեր զավակները, գրեթե բոլորը՝ տոգորված հողին վրա ոտք դրած պանդուխտ մեր զավակները, զինվորագրված այդ էին Հայաստանի ազատագրության իդեալով և շատերը՝ զինվորագրված այդ էին Հայաստանի ազատագրության իդեալով տոգորված էր նույն ինքն Խորհրդային սրբազան պալաքարին: Այդ նույն ոգիով տոգորված էր նույն ինքն Խորհրդային Հայրիկ, հիմնադիրը՝ ձեռքով, ռազմավարներն մեկը հայ հեղափոխության, որուն հիշատակը սրբությանը պահպանված է մինչև այսօր հայաստանցի ժողովուրդի հոգիին մեջ, և որուն գերեզմանաքարը, ավելի քան այլ կաթողիկոսներունը, հաճախ զարդարված է ծաղիկներով:

Դուք, սիրելիներ մեր, հաջորդներն եք ձեր հայաստանցի հայրերուն, ժառանգորդներն եք անոնց հոգևոր-բարոյական իդեալներուն, անոնց ազգային կապակին: Իսկ այսօրվան կաթողիկոսը, պիտի ուզեր ըսել թե, իր տկար ուժերով կփորձե արժանի դառնալ Խորհրդային Հայրիկի հիշատակին:

Ինչպես գիտեք, հայրենասեր Հայրապետը, վերոհիշյալ կոնդակով կողքա ճակատագիրը իր պանդուխտ զավակներուն, ժամանակավոր կնկատե անոնց պանդուխտությունը և կերպով այն մոտալուտ օրը, երբ անոնք պիտի վերադառնան ազատագրված մայրենի երկիր:

«Հիշեցեք, որ դուք պանդուխտ եք այդ օտար երկրում: Հիշեցեք, որ մի օր Իսրայելի նման Տեր Աստված գձեզ պիտի հանե այդ պանդուխտության աշխարհեն դեպի հայրենի երկիր»:

Ծակատագիրը սակայն այլ կերպ տնօրինեց: Ահավոր աղետ մը, 1915-ին բնաջինջ ըրավ ամբողջ Արևմտահայաստանը օսմանյան կայսերական կառավարության կանխածրագրած գործողություններով: Վերապրողները ցրվեցան ի սփյուռս աշխարհի, իսկ Արևելյան Հայաստանի մեջ, ցարական իշխանության տապալումեն հետո, Սարդարապատի հերոսներու արյունով, հայ ազատագրական շարժումը հասավ իր նպատակի իրագործման և բարենպաստ դեպքերու զարգացումով, 1920-ի աշնան վերջապես ամրապնդվեցավ այդ իրագործումը և հիմնվեցավ այսօրվան հայկական պետությունը, սովետական բազմազգ հանրապետություններու դաշնակցության մեջ:

1920-ին վերջ գտավ հայ ժողովուրդի փոթորկալի պատմության մեկ ժամանակաշրջանը: Սկիզբ առավ նոր Հայաստանը՝ անվտանգության, խաղաղության, հայրենի վերաշինության և ազգային մշակույթի զարգացման պայմաններու մեջ:

Մայր Հայաստանի վերաշինության և զարգացման զուգահեռ, հետզհետե կազմակերպվեցան ու ամրապնդվեցան, մալ արտերկրի հայ գաղութները՝ եկեղեցական, կրթական, մշակութային և ազգային հասարակական իրենց կյանքով ու կազմակերպություններով:

Այսօր երկու միլիոնի հասնող հայություն մը կապրի ի սփյուռս աշխարհի, որմե ավելի քան 800.000-ը ձեր երկրին մեջ: Միացյալ Նահանգաց և Կանադայի հայոց թիվը անեցավ ի հետևանք առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմներուն հաջորդող գաղթականական ալիքներուն՝ Թրքահայաստանեն, Միջին Արևելքի երկիրներեն, Բալկաններեն և Պարսկաստանեն:

Ամերիկահայությունը այսօր արտասահմանի հայության ամենաբազմամարդ, ամենակենսունակ, իր ուժականությամբ ու նյութական հնարավորություններով ամենակարևոր գաղութներեն մին կհանդիսանա, եթե ոչ ամենակարևորը:

Այս կացության վրա ողբալու ժամանակը անցած է արդեն: Հայ սփյուռքը այլևս ժամանակավոր երևույթ չէ: Մեր խոսքը կեդրոնացնելով Միացյալ Նահանգներում վրա, վստահությամբ կրնանք ըսել թե ամերիկահայությունը այլևս մնայուն երևույթ է: Ինչքան ալ մեր սիրտը չուզե հաշտվիլ, մեր մտածումը սակայն պետք է մեզ հաշտեցնե վերջնապես, ներկա առարկայական կացության հետ:

Հետևաբար պետք է ըլլալ՝ իմաստուն, համարձակ և կորովի, տեսնելու իրողությունները այնպես ինչպես կան, և տվյալ պայմաններու մեջ կազմակերպել մեր կյանքը՝ ապրելու, գոյատևելու և զարգանալու համար իբրև եկեղեցի և իբրև ազգային մշակույթ կրող հավաքականություն:

Եվ բարեբախտաբար ժողովուրդ մըն ենք որ զրահված է այս երկու արժեքներով, մեկը կրոնական, մյուսը մշակութային, ստեղծված ու նվիրագործված ավելի քան երկու հազար տարիներու պատմությամբ և ազգային ոգեկանության փորձով:

Ամբողջական դարձնելու համար Մեր գնահատականը հայ ժողովուրդի մասին, հարկ է ավելցնել նաև թե, մեր ժողովուրդը ոչ միայն հնագույն քրիստոնյա և մշակույթ ստեղծող ժողովուրդներեն մին կհանդիսանա, այլև մեկը այն քիչերեն, որ տևապես մարտնչած է ու զոհված, և հավատքի փայլուն վկայություններու և մշակութային հարուստ գանձերուն հետ միասին, մեզի շնորհաբեր թողած է՝ արյունով գրված հերոսական սխրագործությանց էջեր, ի խնդիր իր ազգային ոգեկան արժեքներու պահպանման և արդարության ու օգնականության իդեալներու հաղթանակին:

Այսօր ալ մեր ազգը, թե իր մայր հողին վրա և թե ի սփյուռս աշխարհի, անալլայ ու հպարտ, տերն ու արթուն պահապանն է իր նախնյաց կրոնական և մշակութային ժառանգության, տերն է և քաջակորով պաշտպանը իր նախնյաց իդեալներուն: Եվ ավելին տակավին. մեր ժողովուրդը այդ նույն ժառանգությանց և իդեալներու ոգեկանության ճանապարհով հառաջ կընթանա՝ նոր արժեքներով, նոր սխրագործություններով հարստացնելով մեր ազգային կյանքն ու պատմությունը:

Այսպես է ահա. որ մենք հայերս, մեր առաքելական Մայր եկեղեցիով, մեր մշակույթով և մանավանդ արդի Հայաստանի պայծառ իրականությամբ գմեզ կզգանք հպարտ, զորավոր ու լավատես:

Ամերիկահայությունը անբաժան մասը ըլլալով հայ ժողովուրդի, անբաժան մասն է հայ եկեղեցիին և հայ մշակույթին: Հետևաբար դուք ևս, սիրեցյալ զավակներ Մեր, իրավունքը և պարտականությունը ունիք մնալու՝ հպարտ, զորավոր և լավատես:

Այսպես ուրեմն, ձեր առաջ դրված հիմնական հարցն է՝ ամերիկյան երկրի և կյանքի արդի պայմաններուն մեջ, ձեր համայնքային կյանքը ապրիլ Հայաստանյայց Մայր եկեղեցիի հովանիին տակ, հաղորդակից մնալով հայ ժողովուրդին և նոր զարգացող ազգային մշակույթի արժեքներուն: Այլ խոսքով, գոյատևել իբրև հայկական հավաքականություն՝

ա. Պահպանելով նախնյաց կրոնական հավատքը, Հայաստանյայց եկեղեցւո ձևերուն մեջ:

բ. Հաղորդ մնալով հայ մշակույթի արժեքներուն, ինչպիսիք են՝ հայոց

պատմությունը, հայ լեզուն, հայ գրականությունը, հայ թատրոնը, հայ երաժշտությունը և մյուս արվեստները, որոնք նոր փառավոր կճառագայթեն այսօր մեր վերածնած մայր հայրենիքի մշակութային կեդրոններեն:

գ. Կենդանի կապ պահպանելով և մշտապես հաղորդակցության մեջ գտնվելով մեր կրոնական հավատքի օրրան Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի հետ, պատմական Աթոռը Հայոց Հնդհանրական Հայրապետության: Այնտեղ և միմիայն այնտեղ, սուրբ գրական Հայաստան աշխարհի և սուրբ Էջմիածնի մեջ են ձեր կրոնական և մշակութային կյանքի արմատները:

դ. Կենդանի կապ պահպանելով սփյուռքի հայոց եկեղեցական և մշակութային կեդրոններում հետ ի խնդիր ամբողջ մեր եկեղեցիին և ժողովուրդին ներքին միության ամրապնդման:

Այս նպատակները կենսագործելու համար բնականաբար անհրաժեշտ կդառնա՝ առավել ամուր հիմքերու վրա կազմակերպել թեմական-եկեղեցական կյանքը, զարկ տալ եկեղեցասեր երիտասարդաց կազմակերպությանը, ընդարձակել ու առավել նպատակալաց դարձնել կրթական հաստատություններու ցանցը, այսինքն ամենօրյա և կիրակնօրյա հայ վարժարանները, քաջալերել՝ հայոց պատմության, գրականության և մշակույթի ծանոթացման ու տարածման նպատակով ամեն ձեռնարկ, զորավիճ կանգնիլ հայ մամուլին և հայ բարեսիրական, մշակութային և մարզական միություններում:

Այսպիսի նպատակադրում և ծրագիր, անշուշտ նորություններ չեն ձեռք համար: Ամերիկահայ գաղութը իր գոյության առաջին իսկ օրերեն, այս մտահոգությունները ունեցած է և տարիներու ընթացքին ջանք չէ խնայած ի խընդիր իր կրոնական, մշակութային և ազգային գոյատևման:

Այսօր ալ ձեր կյանքի պատկերը հստակ վկայություն մըն է՝ ծրագրված ու կազմակերպված հավաքական աշխատանքի, հետզհետե առավել դրսևվորվող արդյունավետության: Այս բոլորի վրա Մենք պիտի կամենայինք ավելցնել մեր համոզումը թե ամերիկահայ մեր ժողովուրդը, ավելին, շատ ավելին կարող է իրականացնել իր գոյատևման, իր հոգևոր-մշակութային հավաքական կյանքի ամրապնդման ճանապարհին վրա:

Նախ՝ թեմական կեդրոնները, առաջնորդարանները և եկեղեցիները պետք է առավել ապահովվին մնայուն եկամուտներով: Անոնք պետք է ազատին ամեն տարի իրենց բյուջեները հավասարակշռելու մղձավանջեն:

Երկրորդ՝ ծրագրված կերպով պետք է աշխատանք տանիլ ապահովելու համար եկեղեցիները հոգևոր սպասավորներով, որոնք ըլլան լրջորեն պատրաստված և արժանի իրենց կոչումին ու նաև թրծված հայ ոգեկանությամբ, հայ մշակույթի արժեքներով: Մենք չենք կրնար երևակայել հայ հոգևորական մը որ քաջատեղյակ չլլա հայերեն լեզվին, հայ եկեղեցական մատենագրության և հայոց պատմության:

Երրորդ՝ ամենայն լրջությամբ պետք է հետապնդել ամենօրյա վարժարաններու կազմակերպումը հայաշատ բոլոր մեծ կեդրոններում մեջ: Լոս-Անջելոսի փորձը քաջալերական եղավ: Պետք է համառ պաշար մղել այս ուղղությամբ և հասնիլ այն արդյունքին որ ամերիկահայ մանուկներում գոնե 10 տոկոսը հայկական կրթություն ստանա: Մեր կարծիքով, ձեր երիտասարդներեն տասեն մեկը եթե հալեցի կրթություն ունենա, իր ետևեն կրնա տանիլ մյուս ինն ալ, եկեղեցական-ազգային կյանքին մեջ:

Կարևորությամբ կընդգծենք, թե շեշտելով հայ մշակույթի արժեքներում պահպանման կարևորությունը, չենք մտածեր ամերիկահայ երիտասարդության անջատումի մասին ամերիկյան ընկերային և մշակութային կյանքեն: Ոչ

միայն հնարավոր, այլև անհրաժեշտ կնկատենք որ ամերիկահայը ինքզինքը նկատեւ երկու մշակույթներու պատկանող ամերիկյան քաղաքացի: Այո, ապրելու և գործելու այս եղանակը հնարավոր է և անհրաժեշտ մանավանդ ձեր երկրին մեջ, ուր, ինչպէս քաջ գիտեք, բնակչության տարբեր համայնքները ոչ միայն որևէ արգելքի առջև չեն գտնվիր, ամերիկյան պետության մշակութային քաղաքականության կողմէ, այլ նույնիսկ կքաջալերվին անոնք՝ անկաշկանդորեն պահպանելու և զարգացնելու իրենց կրոնական և ազգային-մշակութային կյանքն ու կազմակերպությունները:

Երկու մշակույթներու պատկանելու վերաբերյալ, թույլ տվեք այստեղ մեջբերել պարբերություն մը 1940-ին Պուքերեշ հրատարակած «Մուսա լերան հայերը» Մեր գրքեն (էջ 52—55)՝

«Մենք հաճախ թյուր հասկացողություն ունինք Եվրոպայի մասին: Մեր մեջ կան երկու ծայրահեղություններ: Կան ոմանք որոնք բացարձակ կարհամարհեն ամեն ինչ որ արևմտյան քաղաքակրթության և մշակույթի արդյունք է, ու կհամառին փակված մնալ իրենց պատյանին մեջ հանուն հայապահպանության: Կան ուրիշներ ալ որոնք հանկարծական ուստումով մը, երես կդարձնեն այն ամենուն, ինչ որ հայկական է ու կսկսին ապրիլ մակերեսային, թեթև կյանք մը որ իր սնունդը կառնէ Եվրոպայի քաղաքակրթության թափփոփուկներէն: Մանավանդ մեր նոր սերունդին մեկ մասին մեջ է որ տարածված է այս տգետ և հիվանդագին լրբորնումը: Ասոնք «եվրոպականամալ» ըսելով կհասկընան ջազն ու պարը, ածան վեպերը, թեթև հաճույքները, իրենց ազգային բարքերը արհամարհելը, հայ լեզուն արհամարհելը և այլն, մեկ խոսքով հայկական համայնքի ծոցեն ու կյանքեն մեկուսացումը:

Ու այս երկու ծայրահեղ վերաբերմունքները, հակառակ արտաքին երեվույթներուն, ավելի իրարու մոտ են քան թե իրարմէ հեռու: Որովհետև իրականության մեջ, այն հայ մարդը որ ինքն իր պատյանին մեջ քաշուած կապրի՝ արհամարհելով մշակութային շրջապատը, շատ հաճախ մեկ ծայրահեղութենէն կիյնա մյուսը: Եթե այդ բանը իրեն չպատահի, անպայման կպատահի իր զավակին:

Նկատելի է որ այն հայ մարդը, որ այդ արհամարհական և անհաղորդ կեցվածքը ունի հանդեպ արևմտյան մշակույթի բարիքներուն, կուզէ իր զավակն ալ նույն վիճակին մեջ պահել, հանկարծ որոշ տարիքի մը, իր երիտասարդ տղան կամ աղջիկը ձեռքեն կփախի ու կդառնա այնքան օտար հայության հանդեպ ինչքան իր հայրը օտար մնացեր էր Եվրոպայի հանդեպ: Շրջապատեն բացարձակ մեկուսացումը, մշակութային կյանքի արտաքին աղբյուրներէն կամովին զրկվիլը անխուսափելիորեն կտանի դեպի այլասերում:

Առողջ ճամփան ուրեմն մեկուսացումին մեջ չէ, այլ ընդհակառակը՝ Եվրոպայի մշակույթին—իսկական մշակույթին—հաղորդակից ըլլալուն մեջ: Եվրոպայի մշակույթը ըսելով սակայն չենք հասկնար այն մակերեսային մտայնությունները կամ թեքնիք բարիքները զոր Եվրոպան կու տա մեզի, այլ այն տևական և կենդանի արժեքները որոնք Արևմուտքի հիմունքները կկազմեն ու փառքը միաժամանակ: Չենք ըսեր, բնական է, որ հայ երիտասարդը մասնակից չըլլա իր շրջապատի հաճույքներուն և քաղաքակրթության թեքնիք բարիքներուն, բայց Մենք կպնդենք թե պետք չէ ատով միայն գոհանալ, պետք չէ տեսնել էվրոպականությունը լոկ այդ կարգի բարիքներու մեջ: Մանավանդ, որ ատոնք են որ հալը կօտարացնեն ու ազգային հարազատ, բնական հոգին կդժգունեցնեն, կալսասերեն և ոչ թե արևմտյան իսկական մշակույթը: Ծմարիտ մշակույթը չօտարացներ, այլ ընդհակառակը՝ կզո-

րացնե քու մշակույթը: Ան կմոտեցնե մեզ մեր ազգային, սեփական, մնայուն արժեքներուն: Եթե հալը իր ազգային արժեքներով զինված ծանոթանա, օրինակ, Արևմուտքի ճարտարապետության հրաշալիքներուն և գնահատել գիտնա զանոնք՝ չի կրնար չսիրել ու չհպարտանալ հայ ճարտարապետության հրաշալիքներով:

Եթե հայ երիտասարդը ճանչնալ ու հասկնալ սորվի եվրոպական երաժշտությունը, գրականությունը, պատմական-քաղաքական դեպքերը, և այլն, այն ատեն լավ գնահատել պիտի գիտնա իր սեփական ազգին երաժշտությունը, գրականությունը, պատմությունը և այլն: Անշուշտ կենթադրենք որ հայ երիտասարդը, նախ իր ազգային արժեքներու մասին, հստակ գաղափար մը պիտի ունենա:

Չորրորդ՝ հույժ անհրաժեշտ կգտնենք և կմաղթենք որ հաջողությամբ պսակվին ձեր ճիգերը՝ վերականգնելու ներքին միությունը ձեր եկեղեցական կյանքին ներս, վերամիավորումովը այն հատվածին, որ ինքզինքը բաժանյալ կնկատե՝ Հայոց Ընդհանրական Հայրապետության Մայր Աթոռ սուրբ Էջմիածնեն: Ձեր տիրախնամ թեմի կազմավորման 75-րդ տարեդարձի սեմին, Մենք՝ կաթողիկոս Ամենայն Հայոց, անգամ մը ևս կուզենք խոստովանիլ թե Մեր հոգին չի կրնար հաշտվիլ որևէ բաժանումի և երկփեղկումի հետ: Ոչ մեկ հայ եկեղեցի և ոչ մեկ հայ հավատացյալ չենք նկատեր բաժնված հայոց Մայր Աթոռեն: Սուրբ Էջմիածինը չի կրնար բաժնվիլ իր զավակներեն: Հայ մարդը չի կրնար բաժնվիլ սուրբ Էջմիածնեն: Ոսկյա կանոնն է այս հայության կյանքին, ի մասնավորի սփյուռքի պայմաններուն մեջ: Մեր կյանքի սահմաններեն թող հեռանան ու անհետ չքանան բոլոր տեսակի հակակրթություններն և հակամարտությունները, կամ կողմնակի նկատումները կամ հին դեպքերու տխուր հիշատակները:

Հայոց պատմության այս ժամանակաշրջանին, երբ մեր ժողովուրդի կենսն ավելին կգտնվի մայր երկրի սահմաններեն դուրս, ավելի քան երբեք հրամայական կդառնա ամրապնդել և ամխորտակելի միաձուլ ժայռի մը վերածել հայ քրիստոնեությունը, իր մեկ ու անբաժան Մայր եկեղեցիով ու նվիրապետական կառույցով, որպեսզի ան առավել արդյունավետությամբ կարողանա շարունակել հոգևոր շինության և ազգապահպանման իր պատմական առաքելությունը:

Ամերիկահայ եկեղեցին կարիք ունի առավել նպատակասլաց ու շինարար աշխատանքի ծավալման, համահայկական համերաշխ ու խաղաղ մթնոլորտի մեջ, մեկտեղումովը և գործակցությամբը բոլոր հավատավոր, գաղափարապաշտ, կենսունակ ուժերու:

Ահա Մեր հայրական սրտեն բխած քանի մը մաղթանքներ և հորդորներ՝ ուղղյալ ձեզի և ձեր միջոցավ համայն ամերիկահայ Մեր զավակներուն անխըտիր:

Վերջին տարիներու ընթացքին մանավանդ, Մենք միշտ անկեղծ գոհունակությամբ կարդացած ենք ձեր թեմական խորհուրդներու տարեկան գործնական տեղեկագրությունները և թեմական-պատգամավորական ժողովներու ատենագրությունները: Այս փաստաթուղթերը հստակ ու խոսուն արտահայտություններն են ձեր թեմական-եկեղեցական կյանքի կազմակերպչական, կենսունակության և շինարար հառաջընթացի:

Այսօր Մեզի համար հաճելի է անձամբ ներկայացնել Մեր անկեղծ գնահատանքը և սերը ձեր թեմակալ առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանին, որ իր անձնավորությունը հատկանշող շերտ եռանդով, հոգևոր ներշնչ-

չումներով ու հավատարմությամբ դեպի Մայր Աթոռ սուրբ Էջմիածին, իր պարտքը կկատարեն իբրև ուխտյալ սպասավոր եկեղեցվո և հոգևոր առաջնորդ ժողովուրդի:

Մեր գնահատանքը և սերը կբաշխվի նաև բոլոր անոնց, որոնք հոգեվորական թե աշխարհական, անմիջական գործակիցներն են թեմակալ սրբազան առաջնորդին, ինչպես և թեմի բոլոր եկեղեցիներու հոգևոր հովիվներուն, որոնք զինվորյալ մարմին մը կազմած, ձեռք-ձեռքի տված, իրենց լավագույնը կնվիրաբերեն մեր Մայր եկեղեցիին ու ժողովրդյան ծառայության ճամփուն վրա:

Այստեղ խոր գնահատանքով ու սիրով կուզենք ողջունել նաև այն ազնիվ մարդիկ, որոնք Մեր երանելի նախնյաց բարեպաշտ հոգիով տոգորված, իբրև հարազատ ներկայացուցիչներ ժողովուրդի, հիանալի եռանդով ու բարոյական հեղինակությամբ իրենց աշխատանքի բաժինը կբերեն, որպեսզի թեմը հաստատ ու անասան մնա, որպեսզի ձեր եկեղեցիները շեն ու պայծառ մնան, որպեսզի բարձր հնչե այս քրիստոնյա մեծ երկրին մեջ, սուրբ անունը մեր Մայր Էկեղեցիին և բարի համբավը մեր ժողովուրդի զավակներուն իբրև շինարար ու հավատարիմ քաղաքացիներ:

Այս ազնիվ անձնավորությունները դուք եք, հարգաբաժան պատգամավորներ և դուք՝ հարգաբաժան անդամներ թեմական խորհուրդի: Շնորհակալություն ձեզի, օրհնություն ձեզի:

Հայրապետական գնահատանք և օրհնություն նաև առաջնորդարանի և եկեղեցական համայնքներու կողքին գործող բարեհոգի տիկնանց և քրիստոսասեր երիտասարդաց միությանց անդամներուն և կիրակնօրյա հայ վարժարաններու ղեկավար մարմիններուն և ուսուցիչ-ուսուցչուհիներուն և մյուսոնաբայր աշակերտության:

Թող հավետ առատ ու պայծառ լույսի մեջ շողան ձեր եկեղեցիները բոլոր և սուրբ Հոգվո շնորհները բաշխեն հայոց հոգիներուն:

Այս հանդիսավոր պահուն, Մեր խոսքը փակելե առաջ, Մեր հալացքը կուղղենք նաև դեպի այն մեծահոգի, ստեղծարար ժողովուրդը, որուն ծոցին մեջ կապրիք՝ ազատ, անվրդով ու բարգավաճ: Թող Աստված խաղաղ հառաջընթացքի մեջ պահե ամերիկյան ժողովուրդը, աշխարհի մեջ իր կոչումին կենսագործման ճանապարհին վրա, համայն աշխարհի խաղաղության և ժողովուրդներու բարեկամության պայմաններու մեջ:

Մեր խոսքը կփափագինք վերջացնել երանաշնորհ Խրիմյան Հայրիկի հորդորներով:

«Պանդուխտ և սիրեցյալ ժողովուրդ, ալժմ այս է իմ պատվեր առ քեզ, ինչ որ մեր Փրկիչ կտակեց իր աշակերտներին «այս է պատուեր իմ զի սիրեսցիք զմիմեանս, որպէս և ես զձեզ սիրեցի» այո, այս է իմ պատվեր, որ դուք իրար սիրեք, ինչպես ես ձեզ սիրեցի. սորանով թող ճանաչեն զձեզ, որ դուք իմ զավակներս եք, ո՞հ ո տալի ինձ զյեւս արծվո զի պացալ առ քեզ հասնեի և կենդանի բանիվ խոսեի և մխիթարեի, բայց ես ծերացած, ծերության կապանքներով կաշկանդված և բազմաթիվ հոգսերով ծանրաբեռնված, միմիայն այս թուլթով կարող կլինեմ իմ պարտիս կատարել:

Ավետարանի սիրո հետ ավանդում եմ ձեզ, սիրելի ժողովուրդ, Փրկչի խաղաղությունը «զխաղաղութիւն զիմ տամ ձեզ, որ որպէս աշխարհս տամ ես ձեզ» զի աշխարհիս խաղաղություն անկայուն է: Աստուծո խաղաղություն է, որ հավիտեանական է և մարդուս կերջանկացնե: Խաղաղությամբ և սիրով ապրեցեք միմյանց հետ, որ կարող լինիք այդ օտար երկրում, այդ բազմալեզու

աշխարհում ձեր գոյությունը պահպանել, ձեր պարկեշտ կյանքը և քաղաքավարի ընթացքը թող ձեզ պատկառելի կացուցանեն հաչս օտարաց: Մի և մի երբեք տաք տեղի խոտվության և ատելության: Միաբան, միասիրտ և միակամ եղեք գործի, աշխատանաց, կենցաղավարության և աստվածաշնորհության մեջ: Միրեցեք ձեր անարատ Մայր ս. Կաթողիկե եկեղեցին, որ ծնավ զձեզ ս. ավագանավ և դիեցույց յուր անխաղախ և մաքուր կաթով, այն է ուղիղ վարդապետությամբ և պարզ ուղղափառ դավանությամբ, որ ավանդված էր ս. Լուսավորչեն և նորա երանելի հաջորդներեն:

Եվ արդ, սիրելիք Մեր, «Գոհացարուք յամենայն ժամ ի վերայ ամենայնի, յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ Հօրն և Աստուծոյ. հնազանդ լերուք, միմեանց երկիրդին Քրիստոսի» (Եփս. Ե 20—21). ամեն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

1973 թվականի մայիսի 4—5 օրերին ԱՄՆ-ի Ուստր քաղաքում գումարվել է Ամերիկայի Միացյալ Նահանգաց արևելյան թեմի 71-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը՝ առաջնորդ տ. Թորգոմ արք.-ի նախագահությամբ, ուր և ժողովի բացումից հետո, մայիսի 4-ին, ընթերցվել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սույն ողջույնի և օրհնության գիրը:

